13 մայիսի 2016 թ.
Ժամը 12:00 թիվ՝ 2

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

<ՈՒԱԿ-ԲԸԾՁԲ-16/5> ծածկագրով

գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
/ընդհ. հարցերով փոխտն./ Ա. Մինասյանց
Անդամներ
/գլխ. հաշվապահի տեղակալ/ Շ. Անանյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

Հանձնաժողովի նիստին բացակայում էին ՝
/նյութ. բաժնի հաշվ./ Ա. Հարությունյան

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի թիվ 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» / այսուհետև՝ Կարգ / 30-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մինասյանց

1. **<u>Ընդունել ի գիտություն որ՝</u>**

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 15 ապրիլի 2016թ. էլեկտրոնային եղանակով, սահմանված կարգով տրամադրվել է հրապարակման: Գնման ընթացակարգի հրավերը 18 ապրիլի 2016թ. հրապարակվել է տեղեկագրում: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նախաորակավորման հայտերի ներկայացման համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի քսանհինգ օրացուցային օրից, որը հաշվարկվում է նախաորակավորման հայտարարության հրապարակման պահից: Ղեկավարվելով<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով հայտերի գնահատման նիստը տեղի է ունեցել սույն թվականի մայիսի 13-ին.

1.2 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

«Գաուդեամուս» ՍՊԸ-ն ՀՎՀՀ 02576753 էլ. հասցեն՝ karine@gaudeamus.am Հեռ. (010) 561678

2. **Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության մասին**

2.1 Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու հայտը, Մասնակցի կողմից նեկայացվել է էլեկտրոնային եղանակով: Հայտում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են նախաորակավորման հայտարարության պահանջներին համապատասխան.

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու), դեմ 0 (զրո)***

3. **<u>Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին՝</u>**

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

4. **<u>Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին՝</u>**

4.1 Բողոքներ չեն եղել:

5. **<u>Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝</u>**

5.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

6. **<u>Կազմակերպված բանակցությունների մասին՝</u>**

6.1 Բանակցություններ չեն կազմակերպվել.

7. ***<u>Մերժված հայտերի վերաբերյալ</u>***

7.1 Մերժված հայտեր չեն եղել

8. Նախավորակավորված մասնակից ճանաչելու մասին

8.1 Ուսումնասիրելով Մասնակցի կողմից Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Գաուդեամուս» ՍՊԸ-ին ճանաչել և ընդգրկել նախաորակավորված մասնակիցների ցուցակում.

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու), դեմ 0 (զրո)***

9. Գնման ընթացակարգի հրավերը նոր խմբագրությամ հաստատելու և Նախաորակավորված Մասնակցին ուղարկելու մասին.

9.1 Ղեկավերվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ մասերի և Կարգի 73-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթներով, հանձնաժողովը որոշեց՝ գնման ընթացակարգի հրավերի տեքստը էլեկտրոնային եղանակով ուղարկել «Գաուդեամուս» ՍՊԸ-ին:

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու), դեմ 0 (զրո)***

9.2 Հաշվի առնելով, որ ՀՀ ֆինանսների նախարարի <<05>> մայիսի 2016թ. թիվ 54-Ա հրամանով ԲԸ ընթացակարգի հրավերի տեքստի օրինակելի ձևը հաստատվել է նոր խմբագրությամբ, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 15 ապրիլի 2016թ հանձնաժողովի որոշմամբ հաստատված ՈՒԱԿ-ԲԸԾՁԲ-16/5 ծածկագրով գնման ընթացակարգի տեքստը փոփոխել և համապատասխանացնել թիվ 54-Ա հրամանով հաստատված ԲԸ ընթացակարգի հրավերի տեքստի օրինակելի ձևին

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու),*** դեմ ***0 (զրո)***

Հանձնաժողովի նախագահ
/ընդհ. հարցերով փոխտն./ Ա. Մինասյանց _____

Անդամներ
/գլխ. հաշվապահի տեղակալ/ Շ. Անանյան _____

քարտուղար՝
/գնումների համակարգող/ Հարություն Օհանյան _____